Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 614-Ա որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 112-Ա որոշման

«ՆՇԱՆ ԵՎ ԱԻԴԱ ԿԱՐԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՔՈԼԵՋԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	Արմավիրի մարզի Փարաքար համայնքում նորակառույց Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջի արդիականացում, որն իրենից ենթադրում է քոլեջի համապատասխան գույքով կահավորում, նոր սերնդի սարքավորումների տեղակայում, հարմարավետ և տրամադրող միջավայրի ստեղծում, որտեղ Փարաքար համայնքի և ՀՀ բոլոր մարզերի երիտասարդները հնարավորություն կունենան անվճար կրթություն ստանալ, ձեռք բերել խորը ինժեներական և տեխնոլոգիական գիտելիքներ, թվային արհեստների և արվեստների ոլորտի հմտություններ, կներգրավվեն արտադրական աշխատանքներում, քոլեջում անցկացվող կրթական ծրագրերը և դասընթացները կլինեն երկարաժամկետ բնույթի՝ ըստ կրթական ծրագրերի զարգացման և մասնագիտական պահանջարկի, ինչպես նաև կստեղծվեն ժամանակակից և հարմարավետ պայմաններ նոր սերնդի ուսանողության համար, որպեսզի դասընթացներն անցկացվեն պատշաճ կերպով, ինչպես նաև քոլեջի ուսանողների անվճար և հարմարավետ փոխադրման համար ներմուծվելու են տրանսպորտային միջոցներ: Քոլեջի գլխավոր առաքելությունը կլինի միջմարզային համագործակցությունն ու երիտասարդների համախմբումը:

2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
4.	**Ծրագիրը կատարողը**	«Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամ (Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց 68, ՀՎՀՀ՝ 05532905)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար խոշորացված համայնք, բնագավառը՝ կրթական
6.	**Ծրագրի բյուջեն**	211,169,000 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	«Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամի Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջ (Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Ի. Գասպարյան փողոց 2, ՀՎՀՀ՝ 04445077)
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2025 թվականի փետրվարի 25-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1) Արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջի կահավորանքի, ներքին հարդարման պարագաների, նոր սերնդի սարքավորումների, արտաքին լուսավորության սարքավորումների ու ֆուտբոլի խաղադաշտի արհեստական խոտածածկի ձեռքբերման, ներմուծման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 157,589,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի փետրվարի 25-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը. 2) Ուսանողների անվճար և հարմարավետ փոխադրման համար տրանսպորտային միջոցների ներմուծում՝ 47,280,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի փետրվարի 25-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը. 3) Արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջի էլեկտրաէներգիայի սնուցման համար արևային վահանակների ներմուծում՝ 6,300.000 դրամ:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1) 40+1 անձի համար նախատեսված 1 հատ տրանսպորտային միջոցի ներմուծում՝ 31,520,000 դրամ. 2) 16+1 անձի համար նախատեսված 2 հատ տրանսպորտային միջոցի

		ներմուծում՝ 15,760,000 դրամ. 3) աթոռների, սեղանների, գրապահարանների ներմուծում՝ 7,880,000 դրամ. 4) սանհանգույցի համար անհրաժեշտ պարագաների և հավաքածուների ներմուծում՝ 3,349,000 դրամ. 5) միջսենյակային դռների ներմուծում՝ 3,400,000 դրամ. 6) արտաքին լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 3,940,000 դրամ. 7) համակարգչային սարքավորումների ներմուծում՝ 63,040,000 դրամ. 8) ակուստիկ վահանակների սալիկների ներմուծում՝ 480,000 դրամ. 9) ուսանողների համար պրակտիկ գիտելիքներ ձեռք բերելու համար կիրառվող արտադրական հաստոցների ներմուծում՝ 59,100,000 դրամ. 10) ֆուտբոլի խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում՝ 3,400,000 դրամ. 11) կահույքի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 13,000,000 դրամ. 12) արևային վահանակների և դրանց միացման համար նախատեսվող մալուխների ներմուծում՝ 6,300,000 դրամ:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Նախատեսված չեն:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Փարաքարի համայնքապետարան
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

16.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ